# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԹԵՔՍԵՐՎ ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/135 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Canon | Canon | Պրոֆեսիոնալ կոմպակտ տեսախցիկ Տեսախցիկը հագեցված է 4K օբյեկտիվով՝ 15x օպտիկական զումով և 3 օղակավոր ձեռքով կառավարմամբ: Տեսախցիկը կարող է նկարահանել 10-բիթանոց 4:2:2 4K UHD տեսանյութ XF-AVC (in-frame and Long GOP) MP4 ձևաչափերով երկու SD քարտերի վրա: Այն ունի տեսագրման մի քանի ռեժիմներ՝ ներառյալ կադր առ կադր, ինտերվալով ինչպես նաև դանդաղեցված և արագացված մինչև 120 կադր/վրկ արագությամբ FHD-ձևաչափ: Տեսախցիկն ունի ներկառուցված Wi-Fi/Ethernet՝ բրաուզերի միջոցով հեռահար հասանելիության ապահովման նպատակով հեռահար հասանելիության հավելված, ֆայլերի փոխանցման հավելված, հոսքային փոխանցում IP-ով և FTP-ով: Խցիկը հնարավորություն է ընձեռնում օգտագործել այն որպես վեբ-խցիկ՝ առանց կողմնակի HDMI-USB ադապտերների: Տեսախցիկը հագեցված է պատկերի 5 առանցքանի օպտիկական կայունացման (IS) համակարգով՝ պատկերի կայունացման 3 երեք ռեժիմներով՝ ստանդարտ, դինամիկ և ուժեղացված: Պրոֆեսիոնալ տեսախցիկը ապահովում է HDR տեսագրում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | HLG և PQ ձևաչափերով: Տեսախցիկը ունի նաև բազմաթիվ գործառույթներ միտված HDR նկարահանման ընթացքում ավտոմատ/ձեռքով կառավարում իրականացնելու համար: Ունի SD քարտի երկու սլոթ` տարբեր ձևաչափերով, այդ թվում` 4K/HD և XF-AVC/MP4, միաժամանակյա տեսագրման համար: Հասանելի է նաև երկսլոթային տեսագրման ռեժիմներ: Դանդաղեցված և արագացված նկարահանում մինչև 120 կադր/վրկ արագությամբ Պրոֆեսիոնալ տեսախցիկը ապահովում է դանդաղեցված և արագացված տեսագրություն, ինչպես նաև կարող է տեսագրանցել վերարտադրման արագությունից տարբերվող հաճախականությամբ կադրեր` դանդաղեցված և արագացված շարժման էֆեկտների ստեղծման նպատակով: Դանդաղեցված տեսանկարահանումը կարողանում է իրականացնել մինչև 120 կադր/վրկ արագությամբ (x0.2) Full HD ձևաչափով: Ավտոմատ ֆոկուսացումը դեմքերի հայտնաբերմամբ և վերահսկմամբ հասանելի է նաև դանդաղեցված և արագացված տեսագրությունների ռեժիմներում 24p – 120p կադրային հաճախականությունների պայմաններում: Ուղղակի հպմամբ /սենսորային/ կառավարում Տեսախցիկը հագեցված է ուղղակի հպման կառավարման համակարգով, որն ապահովում է ընտրացանկի հաճախ կիրառվող համալարումների հեշտ հասանելիությունը ամբողջությամբ պտտվող LCD էկրանին Օգտատերերը կարող է պարզապես դիպչել էկրանին` տեսագրումը սկսելու/դադարեցնելու համար, ֆայլի ձևաչափի թույլտվության ստացման, ISO/ուժեղացման գունային ջերմաստիճանի և դիաֆրագմայի կարգավորման ինչպես նաև կարևոր համալարումների ցուցադրման նպատակով: Նախկինում ընտրացանկի տարբեր տեղերում գտնվող նկարահանման համալարումների կիրարկումը այժմ կարելի է իրականացնել մեկ ձեռքով այսինքն փոփոխություններ մտցնել հենց տեղում պահելով խցիկը: UVC ապահովում Պրոֆեսիոնալ տեսախցիկ UVC-ի ապահովմամբ (USB վիդեո դաս), որը կարելի է օգտագործել որպես վեբ-տեսախցիկ ` ապահովելով միացման պարզություն և նկարահանման լայն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հնարավորություններ, ինչպիսիք են AF-ին հետևելը և մասշտաբավորումը վեբ-տեսախցիկի հիմնական հավելվածների համար Բարձր զգայունության ռեժիմ հնարավորություն է ընձեռում նկարահանել մթության մեջ՝ ի հաշիվ ուժեղացման մեծացման մինչև 36 դԲ: 3,5” պտտվող LCD սենսորային էկրան և 0,36” OLED էլեկտրոնային տեսահսկման սարք Մոնիտորը հնարավորություն է տալիս իրական ժամանակում հետևել տեսախցիկով նկարահանվող տեսանյութին և ունի պտտվող կոնստրուկցիա ֆոկուսավորման խիստ ճշգրտություն պահանջող 4K նկարահանման ապահովման համար: 12G-SDI, Genlock, ժամանակային կոդ և այլ տերմինալներ Պրոֆեսիոնալ տեսախցիկը հագեցված է 12G-SDI հարակցիչով, որի տվյալների փոխանցման արագությունը չորս անգամ գերազանցում է 3G-SDI-ին: Տեսախցիկի 4K 50p ելքը, որի համար նախկինում պահանջվում էր չորս մալուխ 3G-SDI-ով, այժմ կարելի է ապահովել ընդամենը մեկ մալուխով: 12G-SDI ազդանշանը ուղղակիորեն արտանցվում է տեսախցիկից, իսկ արտաքին HDMI ելքը հեշտացնում է միացումը 4K UHD-ի հետ համատեղելի տողանց տարածրմամբ աշխատող ստանդարտ HD վիդեո մոնիտորին: Ճկուն աուդիո մուտքեր, 4 կապուղանոց գծային PCM-ի ապահովմամբ: Այս պրոֆեսիոնալ տեսախցիկը առաջարկում է բարձրորակ 4 կապուղիանոց ձայնի ձայնագրման բազմաթիվ եղանակներ գծային PCM-ի ձևաչափով՝ երկու XLR հարակցիչների՝ ստերեոֆոնիկ mini-jack միկրաֆոնային հարակցիչի կամ էլ տեսախցիկում ներկառուցված ստերեո միկրոֆոնի միջոցով: Ներկառուցված 4 կապուղային ձայնի անկախ համալարումները օգտատերերին թույլ կտան յուրաքանչյուր կապուղու համար սահմանել ձայնագրման մակարդակներ, մուտքային զգայնություն և սահմանափակումներ: Ուղիղ IP հեռարձակում Տեսախցիկը հնարավորություն է ընձեռնում իրական ժամանակում վիդեո հեռարձակման իրականացման՝ օգտագործելով H.264/AVC կոդավորման ձևաչափով IP փոխանցում: Ուղիղ հեռարձակմանը կարելի է հետևել անմիջականորեն տեսախցիկից ՝ ներկառուցված LCD մոնիտորի օգնությամբ, ուղարկելով այն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ավտոնոմ IP կոդավորիչին կամ վերահասցեավորելով մոնիտորին ՝ վավերության ստուգման և հանրային դիտման նպատակով: Ներառում է վիդեո հոսքային հաղորդման SRT արձանագրություն՝ ուղղված փոքր հապաղմամբ հոսքային հաղորդմանը IP ցանցերով: Տեխնիկական բնութագրեր Լուծաչափ՝ 4K UHD Պատկերի տվիչ՝ 1,0 դյույմ 4K UHD CMOS սենսոր Ընդհանուր պիքսելների քանակը՝ 13,2 մեգապիքսել (4268x3148) Արդյունավետ պիքսելների քանակը՝ 8,29 մեգապիքսել (3840x2160) Ուժեղացման մեծացման գործառույթ՝ հասցնում է ուժեղացումը մինչև 36 դԲ, որը ակտիվանում է օգտագործողի կողմից նշանակված սեղմակոճակի միջոցով: Զգայունություն (PAL): f/13, 50.00P, 2000 Lux, 89.9% անդրադարձման գործակից լուսավորվածություն (PAL): 50.00P / 50.00i մոտ. 2,5 յուքս (փականակի արագությունը 1/50 վայրկյան) 25.00 P մոտ 1,3 յուքս (փականակի արագությունը 1/25 վայրկյան) Պատկերի պրոցեսոր Գույնի ընտրանք XF-AVC՝ 4:2:2 MP4՝ 4:2:2 կամ 4:2:0 H.265 / 4:2:0 H.264: XF-AVC/MP4 պրոքսի ֆայլեր՝ 4:2:0 Բիթային խորություն XF-AVC/MP4 H.265՝ 10 բիթ MP4 H.264՝ 8 բիթ XF-AVC/MP4 8 բիթային պրոքսի ֆայլեր Օբյեկտիվ Խոշորացում՝ 15 x օպտիկական (30 x Full HD ընդլայնված խոշորացում), Ֆոկուսային հեռավորություն՝ 8,3-124,5 մմ (35 մմ օբյեկտիվին համարժեք 25,5-382,5 մմ) Դիաֆրագմա՝ f/2.8–4.5 ND ֆիլտր՝ Խտության 3 տեսակ՝ turret switched, motor-driven ND 1/4, ND 1/16, և ND 1/64: Օբյեկտիվի պատկերի կայունացում՝ օպտիկական (ակտիվ կայունացուցիչ / դինամիկ ռեժիմ) Օբյեկտիվների կառավարման օղակներ՝ ֆոկուս/մասշտաբ/դիաֆրագմա Ֆոկուսավորման համակարգ՝ երկպիքսելային CMOS AF՝ աչքերի ճանաչմամբ Փականակի արագություն Փականակի արագություն (PAL)՝ Առավելագույնը 1/2000 վրկ. Փականակի անկյուն՝ 360°-ից 11,25° Դանդաղ փականակ (SLS): 50.00i/50.00P՝ 1/3, 1/6, 1/12, 1/25 վրկ. 25.00 P: 1/3, 1/6, 1/12 վրկ. Ճշգրիտ սկանավորում (PAL)՝ 24,00 Հց-ից մինչև 2003,17 Հց: Տեսագրման կրիչներ՝ x 2 SD քարտ (համատեղելի UHS-II) Միացման հնարավորություններ՝ SDI՝ x 1 (12G-SDI/3G-SDI) HDMI՝ x 1 (Type-A) USB՝ x 1 Type-A (Host) x 1 Type-C |

| | | | |
|---|---|---|---|
| | | | (Device) Աուդիո միացումների հնարավորությունները` 2 x 3-pin XLR 48V ֆանտոմային սնուցմամբ, գծային և միկրոֆոնային, Մուտքային 3.5 մմ հարակցիչ միկրոֆոնի համար (սնուցման աղբյուր DC 2.4V), ներկառուցված միկրոֆոն: Այլ տերմինալներ 2 x BNC / ականջակալ / միկրոֆոն Հեռակառավարման տերմինալ` Type A (2,5 մմ jack), Type B (8-pin connector, RS422-type) Ethernet (Wired LAN) Wi-Fi` 2.4GHz/5GHz 11a/b/g/n/ac MIMO Հոսքային փոխանցման բնութագրեր, Wi-Fi` IP հոսքային փոխանցուման ապահովման արձանագրություններ` SRT/RTSP+RTP/RTP+FEC/RTP/UDP2 Սմարթֆոնների հավելվածների ապահովում Կոնտենտի փոխանցում մոբիլ սարքի Մի քանի տեսախցիկների կառավարում Հեռակառավարում բրաուզերի միջոցով Ապահովվող Wi-Fi Wi-Fi` ներկառուցված IEEE 802.11b/g/n (2,4 ԳՀց) IEEE 802.11a/n/ac (5 ԳՀց) Տեսագրում/Կոդեկ Տեսագրման համակարգ Տեսագրման ձևաչափ (PAL) XF-AVC (MXF): ALL-I/Long GOP. Proxy Files: Long GOP MP4: Long GOP Տեսագրման կադրային հաճախականությունը (PAL)` ներառվում են XF-AVC 422 10bit` (3840 x 2160) 50.00 P / 25.00 P (1920x1080) 50.00P / 50.00i / 25.00P MP4 (HEVC/H.264) 422 10bit` (3840x2160/1920x1080) 50.00 P / 25.00 P MP4 (HEVC) 420 10 bit` (3840x2160/1920x1080) 50.00 P / 25.00 P (1280 x 720) 50.00 P MP4 (H.264) 420 8bit` (3840x2160/1920x1080) 50.00 P / 25.00 P (1280 x 720) 50.00 P Ելք, արտաքին տեսագրման համար` ներառվում են 3840 x 2160` 50,00 p / 25,00 p 1920 x 1080: 50,00 p / 25,00 p / 25,00 PsF / 50.00i 1280 x 720: 59,94 p / 50,00 p 720 x 480: 59,94i (միայն SDI) 720 x 576: 50.00i (միայն SDI) Բարձր կադրային հաճախականության ապահովում` մինչև 120P (FHD, 4:2:2/8-bit կամ 10-bit), ներառյալ 50.00Hz ռեժիմը միաժամանակյա ձայնի գրանցմամբ Արտաքին մոնիտորինգ` 12G/3G -SDI կամ HDMI: Հասանելի է միաժամանակյա արտանցում Աուդիո Ձայնագրման ձևաչափը` ներառվում են MP4` MPEG-2 AAC-LC (16bit, 2ch) / LPCM (16bit, 4ch) XF-AVC` LPCM (24-bit 4ch) Ձայնի կառավարում` ձեռքով կամ ավտոմատ կառավարման հնարավորություն Անկախ` 2 կապուղային գծային/միկրոֆոն/միկրոֆոնային |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԹԵՔՍԵՐՎ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/135 ниже представляет полное описание предлагаемого им товара:

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մուտք +48Վ Մակարդակի անկախ կառավարում մեկ կապուղու համար (- ∞ - ից մինչև +18 դԲ); Ձայնի անկախ սահմանափակիչներ (առնվազն 2 կապուղի); Տոնային գեներատոր` առնվազն 1 կՀց, -12 դԲ / -18 դԲ / -20 դԲ / անջատված: Միկրոֆոնի ազդանշանի մակարդակի չափիչ Սնուցում Սնուցման աղբյուր` 14.4Վ DC (կուտակչային բլոկ), 24Վ DC (DC մուտք) Մատակարարվող լրակազմում ներառված են` Մարտկոց Սնուցման ադապտեր Լիցքավորման սարք /Canon XF605 UHD 4K BP-A30 CA-CP200L CG-A20 / |